

ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՑԱՆԿ

1. [ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ](#)
2. [ԱՐԵԳԱԿ](#) (Մանկական)
3. [ՄԱՆՈՒՇԱԿ](#)
4. [ՍԵՐՄՆԱՑԱՆ](#)
5. [ԱՄԻՍՆԵՐ ԵՎ ՉՈՐՍ ԵՂԱՆԱԿ](#)
6. [ԱՐԵՎ](#)
7. [ՃԱԽԱՐԱԿ](#)
8. [ԼՈՒՄՆԱՀԱԶ](#)
9. [ՍԱԳ](#)
10. [ԿԱՏՈՒ](#)
11. [ՀՈՎՎԻ ԱՆԿՈՂԻՆԸ](#)
12. [ՊԱՌԱՎԻ ՀՈՐԹԸ](#)
13. [ԱՏԱՍԸ ՓՈԽԱԾ](#) (Մանկական երգ)
14. [ՀՈՎՎԻ ՍՐԻՆԳԸ](#) (Ավանդություն)
15. [ՀՈՆԻ ԿՈՐԻԶԸ](#)
16. [ԾԻՏԸ ԵՎ ԲԱԶԵՆ](#) (Մանկական խաղ)
17. [ԱՔԱՂԱՂ](#) (Մանկական խաղ)
18. [ԱՌԱՎՈՏԸ ԳՅՈՂՈՒՄ](#) (Մանկական)
19. [ԵԿԱՐ ԲԱՐՈՎ](#)

1. ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ

Ծիծեռնակը բույն էր շինում,
Ե՛վ շինում էր, ն՛ էրգում,
Ամեն մի շյուղ կպցնելիս՝
Առաջվա բույնն էր հիշում:

Մեկ անգամ էր նա բույն շինել
Եվ շատ անգամ կարկատել,
Բայց այս անգամ վերադարձին
Բույնն ավերակ էր գտել:

Այժմ նորից բույն էր շինում,
Ե՛վ շինում էր, ն՛ էր գում,
Ամեն մի շուղ կպցնելիս՝
Առաջվա բույնն էր հիշում:

Նա հիշում էր անցած տարին
Իր սնուցած ձագերին,
Որոնց ճամփին հափշտակեց
Արյունարբու թշնամին:

Բայց նա կրկին բույն էր շինում,
Ե՛վ շինում էր ն՛ էր գում,
Ամեն մի շուղ կպցնելիս՝
Առաջվա բույնն էր հիշում:
1886

2. ԱՐԵԳԱԿ (Մանկական)

Արև՛, արև՛, ե՛կ, ե՛կ,
Զիզի քարին վե՛ր եկ.
Սև-սև ամպեր հեռացեք,
Արևին ճամփա տըվեք:

Թողեք դա գա նա մե՛զ մոտ,
Դրա լույսին ենք կարոտ.
Կարմի՛ր արև, ե՛կ, ե՛կ,
Նախշուն քարին վե՛ր եկ:
Արևը հաղթեց ամպերին,
Շողքը ձգեց սարերին,
Զիզի քարը տե՛ս, տե՛ս
Պսպրդում է ոսկու պես:

Միրուն արև, մի՛շտ եկ,
Զիզի քարին վե՛ր եկ:

3. ՄԱՆՈՒՇԱԿ

Ասա ինձ, մանուշակ,
Ինչու՞ ես այդպես վաղ
Դուրս եկել մեն-մենակ.

Դեռևս չի բացվել
Ոչ մի տեղ քեզ նման
Հոտավետ մի ծաղիկ:

_ Ես չունիմ մյուսների
Գեղեցիկ հասակը,
Ոչ նրանց հագուստը
Զարդարուն ու շքեղ,
Դուք ինձ չեք նկատիլ,
Եթե ես երևամ
Նրանց հետ միատեղ:

4. ՄԵՐՄՆԱՑԱՆ

Ահա եկան աշնանային թուխպ օրեր,
Մաղմղում են մանրահատիկ կաթիլներ.
Ծառերն իրանց տերևներից մերկացան,
Կռունկները շարան-շարան անց կացան:

Սևացել է դաշտը անթիվ ցելերով,
Բայց մի կողմից դեռ վարում են արոքով,
Մերմնացանը գոգնոցն առած սերմնացուն,
Մերմ է ձրգում աղաչելով աստրծուն.

«Ո՛վ տեր աստված, դու՛ իմ ցանքը պահպանես,
Առատ անձրև, կարմիր արև չըխնայես.
Մեկ բուռն ահա ես տալիս եմ մկներին,
Այս մեկ բուռն էլ ագռավներին, ծտերին:

Բայց մարախը գոհ չի մնալ մի բռնով,
Երկու կտամ, թող կշտանա սրանով.
Մեկ բան էլ կա, որ անունը չեմ տալիս,
Այն դու գիտես... վերևից ե նա գալիս:

Դու սրանցից արտըս պահիր անվնաս,
Ես տերտերից չեմ խնայիլ կալամաս.
Վանականներ, գործակալներ ինչքան գան,
Բոլորեքյանք առատ բաժին կըստանան:

Կերթամ Մարասս խունկ ու մոմով, մատաղով

Միայն արտըս դու պահպանիր ապահով:
Էլ ի՞նչ ասեմ, աստված, ինքըդ լավ գիտես,
Թե ինչ պարտքի, պատուհասի մեջ եմ ես.

Գող-ավագակ մի կողմից են կողոպտում,
Պարտատերըս մյուս կողմից է ինձ խեղդում:
Դրանց ձեռքից, եթե մի բան է մնում,
Այն էլ գայլի կամ ցավի է զոհ դառնում.

Մի տուն լիքը երեխեքս մերկ, քաղցած,
Տարին առատ, բայց ես չունիմ կորեկ հաց.
Հույսըս ահա ոտքիդ տակին փռած է,
Քո սուրբ աջը սըրա վըրա տարածե՛ք»:

1882

5. ԱՄԻՄՆԵՐ ԵՎ ՉՈՐՄ ԵՂԱՆԱԿ

Մարտը տալիս է ձնծաղիկ,
Ապրիլը՝ կապույտ մանուշակ,
Մայիսին բացվում է վարդը,
Սոխակը երգում անուշակ:

Հունիսը մեզ խոտ է տալիս,
Իսկ հուլիսը առատ ցորեն,
Օգոստոսը տանձ ու խնձոր
Եվ ուրիշ շատ հասուն մրգեր:

Սեպտեմբերը մեզ տալիս է
Խաղողի բոլոր տեսակը.
Հոկտեմբերը՝ կարմիր գինի՛ն,
Նոյեմբերը՝ բողկն ու տակը:

Դեկտեմբերին ձյուն է գալիս,
Հունվարին ծածկվում սար ու ձոր,
Փետրվարին սկսվում է
Փոփոխակի ցուրտ ու տաք օր:

Ահա այսպես բոլոր տարին
Թավալվում է չորս շրջանում,

Այս պատճառով չորս ժամանակ,
Չորս եղանակ է մեզ բերում:
1882

6. ԱՐԵՎ

Արև՛, արև՛, դու մեզնից
Երբ հեռացար դեպ հարավ,
Չմեռն եկավ և ամեն ինչ
Հափշտակեց ու տարավ:

Աստված սիրես, էլ մի՛ գնար,
Մի՛ թողնիր մեզ քեզ կարոտ,
Քեզ կըպատվենք, քեզ կըգովենք
Միշտ, իրիկուն, առավոտ:

Որքան գոհ ենք, որ դու բերիր
Գարնան անուշ եղանակ,
Ա՛խ, երանի գարուն լինի
Տարին բոլոր ժամանակ:

Տես թե ինչպե՛ս փթըթել են
Ծառ ու ծաղիկ, կանաչ խոտ,
Տես թե ինչպես տարածվել է
Ամենայն տեղ անուշ հոտ:

Քեզ են գովում թռչնիկները
Իրանց քաղցր դայլայլով,
Հովիվը իր մեղմ սրինգով,
Հողատն անուշ հոլովով:

Չե՛, արև ջան, էլ չըգնաս,
Էլ չըթողնես մեզ կարոտ,
Գնա քնի՛ր գիշերները,
Առավոտը եկ մեզ մոտ:
1884

7. ՃԱԽԱՐԱԿ

Մանի՛ր, մանի՛ր, ի՛մ ճախարակ,

Մանիր սպիտակ մալանչներ
Մանիր թելեր հաստ ու բարակ,
Որ ես հոգամ իմ ցավեր:

Ձեթ եմ ածել ականջներըդ,
Նոր շինել եմ շրտըվիկ,
Դե՛հ, սու՛տ շարժիր լայն թներըդ,
Ոստեր շինիր սրբուլիկ:

Մանի՛ր, մանիր, ի՛մ ճախարակ,
Լիսեռնիկըդ պտըտիր,
Մանիր թելեր հաստ ու բարակ,
Իլկիդ վըրա փաթաթիր:

Տիգրանիկըս գուլպա չունի,
Հանդ է գնում ոտաբաց,
Գաբրիելըս չուխա չունի,
Միշտ անում է սուգ ու լաց:

Մանի՛ր, մանիր, ի՛մ ճախարակ,
Մանիր սպիտակ փաթիլներ,
Մանիր թելեր հաստ ու բարակ,
Որ ես հոգամ իմ ցավեր:

Չըվալ չունինք, չութա չունինք,
Ո՛չ սամոտե, ո՛չ պարան,
Այսպես աղքատ դեռ եղած չենք,
Կտրվել է ամեն բան:

Դեռ հարս էի, որ գործեցի
Քանի կարպետ, խալիչա,
Բայց դրանից շուտ զրկվեցի,
Հիմա չունիմ մի քեչա:

Կարմիր օրըս, երբ սևացավ,
Եվ պարտք մնաց թեն քիչ,
Պարտատիրոջ սիրտն էլ սևցավ —
Եկավ տարավ ամեն ինչ:

Մանի՛ր, մանի՛ր, ի՛մ ճախարակ,
Մանի՛ր սպիտակ քուլաներ,
Մանի՛ր թելեր հաստ ու բարակ,
Որ ես հոգամ իմ ցավեր:
1882

8. ԼՈՒՄՆԱՀԱԶ

– Հայրի՛կ, ինչու՞ մեր Բողարը
Միշտ հաչում է լուսնի վրան.
Մի՞ թե պայծառ լուսնյակը
Մեկ վնաս՞ է տալիս նրան:

– «Ո՛չ, որդյակ իմ, ոչ թե վնաս<
Այլ լույս, միայն լույս է տալիս,
Իսկ շանն՝ իբրև գայլի ցեղի՞
Լույսը գիշերը դուր չի գալիս:

Բայց լուսինը խոմ չըգիտե՞,
Որ իր վրա հաչողներ կան, -
Նա լուռ ու մունջ՝ բակ բոլորած՝
Շարունակում է իր ճամփան:

Մենք էլ, որդյա՛կ, լուսնի նման
Պետք է լույս տանք մութ աշխարհին,
Եվ համարենք, թե չենք լսում
Մեզ վրբա գուր հաչողներին»:
1885

9. ՄԱԳ

Սագիկ-սագին, իմ սիրունիկ,
Ես քեզ կտամ քաղցր կուտիկ,
Որ դու ուտես, շուտ մեծանաս,
Ուրախ ապրես, զվարճանաս:

Երբ մեծանաս, մեծ սագ դառնաս,
Ես կխնդրեմ իմ մայրիկիս,

Որ նա ժողվե քո փետուրներ
Եվ ինձ համար շինե բարձեր:

10. ԿԱՏՈՒ

Կատուն եկավ,
Փիսի՛կ, փիսի՛կ,
Հագար նագով,
Ինչպես հարսիկ,
Դունչը սրբեց
Թաթիկներով,
Մազը սանդրեց
Չանչիկներով.
- Կատու, կատու,
Է՞ր ես տրտում.
Թե՞ մկներն են
Հիմա արթուն:
Կատուն ասեց.
_ Միան՛, միան՛.
Այսինքն թե՛
_ Այո՛, այո՛:

11. ՀՈՎՎԻ ԱՆԿՈՂԻՆԸ

Մարի լանջն է մահճակալ,
Չեչոտ՝ քարը գլխակալ.
Մի հին կապերտ ուսերին,-
Այս է հովվի անկողին:

Երբ անձրև է կաթկաթում,
Եվ կապերտը՝ թըխկթըխկում,
Հովիվն անուշ քնի մեջ
Քաղցր երագ է տեսնում,
Եվ ինդում, ծիծաղում.
Ուխա՛յ, ուխա՛յ, սիրու՛ն հովիվ,
Քունըդ անու՛շ...

1882

12. ՊԱՌԱՎԻ ՀՈՐԹԸ

Ձյուն է գալիս փաթիլ-փաթիլ,
Հետն էլ անձրև կաթիլ-կաթիլ.
Այս միջոցին մի պառավ կին
Հորթ էր փնտրում դաշտի միջին:

Կովը եկավ տավարիցը,
Կուրծ ու ծրծեր կաթով լիքը.
«Հորթուկս ու՛ր է», - նա բառաչեց,
Խեղճ պառավին լացացրրեց:

Մինչդեռ այսպես պառավ ու կով
Ողբում էին լաց ու կոծով,
Հանկարծ լսվեց մի բարակ ձայն,
Կովն իմացավ, որ հորթն է այն:

Կովը վազեց բառաչելով,
Պառավը ետքից տընքտընքալով,
Կորած հորթը մորը գտավ,
Լիքը ծրծերը բերանն առավ:

Ծրծեց բուրբ կաթն ու տկզեց,
Տանտիկնոջը բան չըթողեց.
Բայց պառավը այս անգամին
Միրով ներեց չար հորթուկին:
1882

13. ԱՏԱՄԸ ՓՈԽԱԾ (Մանկական երգ)

Ատամ, ատամ,
Իմ կաթնատամ,
Գնա՛ս բարով
Հարյուր տարով...
Իսկ դու արի՛,
Գալըդ բարի՛,
Իմ նո՛ր ատամ.

Ես քեզ կըտամ
Հարյուր տարի
Հագար բարի-
Էլ դավուրմա՛ ,
Էլ բաստուրմա՛ ,
Չամչով փլա՛ վ,
Հնդու խուրմա,
Տանձ ու ինձոր
Մի՛ շտ, ամեն օ՛ր
Փըստա՛ , բադա՛ մ,
Էլ որ մեկի
Անունը տամ,
Ոսկի՛ ատամ:
1909

14. ՀՈՎՎԻ ՍՐԻՆԳԸ (Ավանդություն)

Նվեր երաժշտագետ Մուշիկին

Հովիվը սարին՝
Ոչխարը առաջին՝
Ոչ շուն և ոչ զենք
Չունի նա կշտին:

Եվ ահա եկան
Օրը ցերեկով
Սոված գայլերը՝
Ամբողջ ոհմակով:

Հովիվն ի՞նչ աներ,
Ինչպե՞ս ազատեր,
Իր ամբողջ հոտը,
Իրան էլ հետը:

Նա ճարը կտրած՝
Սրինգը հանեց
Եվ աղիողորմ
Մի երգ նվագեց:

Եվ ինչպե՞ս քնքուշ,
Ինչպե՞ս մեղմանուշ,-

Բոլոր գայլերը
Կտրեցին ապուշ...

Եվ լսում էին
Սարած, քարացած,
Մրնգի ձայնից
Թովված ու դուրսված:

Բայց ի՞նչ էր երգում
Հովիվն այնպես լու՛րջ,
Որպես մի հարա՛շ,
Որպես մի մրմու՛նջ:

Նրբա նվագը՝
Զիլ ու քաղցրաձայն՝
Մի աղերսանք էր,
Մի գոչ օգնության:

Սրինգն ածելիս՝
Նա ձայն էր տալիս
Իր կտրիճներին՝
Զալում շներին. -

Ա, Չարա՛ր,
Ա, Ղաթա՛ր
Եկե՛ք, հա՛, եկե՛ք,
Ա՛, Քյասա՛ր,
Ա՛, Բասա՛ր,
Հասե՛ք, հե՛յ, հասե՛ք...

Հանկարծ թնդում է
Յուրթն ամեն տեղից.
Ի՛նչ հարայ-հրո՛ց,
Ի՛նչ ո՛ղբ, ի՛նչ ոռնո՛ց...

Շները թև առած՝
Ինչպե՛ս են թռչում,
Հասնում են հովվին
Մի ակնթարթում...

Այսպես մի հովիվ,
Մրնգի շնորհիվ՝,
Փրկում է հոտը,
Չար գազաններից՝
Սոված գայլերից...
1909

15. ՀՈՆԻ ԿՈՐԻՉԸ

Տարեմուտի երեկոյին
Մայրըս թխեց կարկանդակ,
Մեջը դրավ հոնի կորիզ,
Իբրև բախտի նշանակ:

«Կորիզն,- ասաց, – ում որ ընկնի,
Դովլաթավոր կըդառնա,
Ու՛ր որ գնա, ի՛նչ գործ բռնե,
Փառք ու պատիվ կըստանա»:

Կարկանդակը բաժանեցինք,
Կորիզն ընկավ ինձ բաժին,
Եղբայրներս սրտնեղելով՝
Նախանձեցին իմ բախտին:

«Կույր է բախտը, սուտ չէ ասած»
Մեծ եղբայրս փնթփրնթաց,
«Մի՞ թե սա է ամենիս մեջ
Աշխատավոր, բանիմաց...»

Մեկելներն հավանեցին
Մեծ եղբորըս ասածին. –
«Իրա՛վ. իրա՛վ, չէր արժանի»,
Միաբերան ձայնեցին...

Մայրըս ասաց. «Խելոք կացեք,
Ահա կըգա Նոր-Տարին,
Նա որ տեսնե ձեզ կովելիս՝
Պարզև չի տալ ոչ մեկին:

Բայց որ տեսնե դուք սիրով եք
Եվ խոով չեք իրանցից,
Այնուհետև ինչ որ ուզեք,
Չի խնայիլ ձեզանից»:

Այս ասելով՝ նա մեզ տրվավ
Տեսակ- տեսակ մրգեղեն,
Չիր ու չամիչ, տանձ ու խնձոր
Եվ զանազան քաղցրեղեն:

Քաղցր կերանք ու քաղցրացաբք
Եվ խնդացինք շատ ու շատ,
Չարագ արինք նուռ, սերկևիլ,
Ունաբ, սալոր, թուզ, փշատ:

«Հոնի կորիզն» այնուհետև
Բոլորովին մոռացանք,
Եվ շատ սիրով իրար գրկած,
Պառկոտեցինք, քնեցանք...

16. ԾԻՏԸ ԵՎ ԲԱԶԵՆ (Մանկական խաղ)

Ծիտը ծառին ծվլըլում է.
– Ծի վ, ծի վ, ծի վ.
Բազեն գլխին պտըտվում է.
– Վու յ, վու յ, վու յ...
Ծիտը լռեց, ծիտը վախեց.
– Վա յ, վա յ, վա յ...
Բազե՛, թը՛ռռ, բազե՛ թը՛ռռ.
– Հա յ, հա յ, հա յ...
Բազեն թռավ,
Բազեն փախավ,
Ի՛նչ լավ էլավ.
– Հե՛ – հե՛ – հե՛...
Ծիտի՛ կ միտիկ, պի՛ծիկ միծիկ,
Պըտպըտուրի՛կ, չըլպըտուրիկ,
Դու լա՛վ պրծար չար բազեի
Սուր ճանկերից, հա՛ – հա՛ – հա՛...

1882

17. ԱՔԱՂԱՂ (Մանկական խաղ)

Աքաղաղը կանչում է.
– Ծուղրուղու՛ ,
Ղու-ղու-ղու՛ .
Պառավ նանը՛ զարթնում է,
– Տա-տա-տա՛ ...
Պա-պա-պա՛ ...

Աքլա՛ր, ինչու՞ կանչեցիր,
Ինչու՞ նանին՝ զարթեցրիր.
Ա՛խ դու-դու՛ ,
Ա՛յ ջու-ջու՛ :

Ա՛յ նանի, ջա՛ն նանի,
Մեզ մի վեր կացընի,
Թող մի քիչ էլ մնանք,
Քնից լավ կշտանանք:

Աքլորը շուտ է կանչում,
Աքլորը քեզ է խաբում,
Աքլա՛ր, ինչու՞ կանչեցիր,
Ինչու՞ նանին՝ զարթեցրիր.
Ա՛խ դու-դու՛ ,
Ա՛յ ջու-ջու՛ :

1882

18. ԱՌԱՎՈՏԸ ԳՅՈՒՂՈՒՄ (Մանկական)

Արեգակը դուրս է եկել
Պսպրդալով.
Շողքը հերթից ներս է ընկել
Շողշողալով.
Ծիտը ծառին կըչկըչում է
Ծըվըրլալով.
Ձորումն առուն քըչքըչում է
Վըշվըշալով.
Ծույլ տղայի քունն է տարել
Խորմփալով.
Տրեխները շունն է տարել
Մըմըռալով:

1882

19. ԵՎԱՐ ԲԱՐՈՎ

Եկար բարով,
Երթաս բարով.
Եկեք, երեխե՛ք, եկեք,
Ձեռք ձեռքի տանք, պար բռնենք.
Այսօր տարին նորոզվեց,

Նոր օր, նոր ժամ մեզ բերեց,
Հինն անցավ,
Նորն եկավ
Բարո՛վ, բարո՛վ, բարո՛վ.
Մայրիկն այսօր մեզ տրվեց
Մեղր ու չամիչ ու ասեց.
- Քաղցր ու անույշ պառավեք,
Ալևորիք և տեսնեք
Շա՛ տ տարի,
Շա՛ տ բարի,
Բարո՛վ, բարո՛վ, բարո՛վ.
Շնորհավո՛ր նո՛ր տարի,
Քո գալուստը շնորհավոր,
Դու մեզ համար այս տարի
Բարի եղի՛ր ամեն օր,
Մունչ կաս,
Ու կերթաս
Բարո՛վ, բարո՛վ, բարո՛վ:
1884